ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» ---------- 2017թ. N----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Երևանի քաղաքապետի եզրակացությունը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի գրությունը, ղեկավարվելով «Գույքահարկի մասին›› Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, «Հողի հարկի մասին›› Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի թիվ 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. «Հայաստանի ԴՕՍԱԱՖ» հասարակական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող, Ռուբինյանց նրբանցք թիվ 5 հասցեում գտնվող շինության նկատմամբ սահմանել գույքահարկի և հողի հարկի գծով արտոնություն՝ 1.090.957 /մեկ միլիոն իննսուն հազար ինը հարյուր հիսունյոթ/ դրամ, որից գույքահարկ՝ 864.512 և հողի հարկ՝ 226.445 դրամի չափով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՕՍԱԱՖ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի ԴՕՍԱԱՖ» հասարակական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող, Ռուբինյանց նրբանցք թիվ 5 հասցեում գտնվող շինության 2016 թվականի և ընթացիկ 2017 թվականի գույքահարկի և հողի հարկի հաշվարկային գումարը կազմում է 1.090.957 /մեկ միլիոն իննսուն հազար ինը հարյուր հիսունյոթ/ դրամ, որից գույքահարկ՝ 864.512 և հողի հարկ՝ 226.445 դրամ, որի համար Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարը 28.02.2017թ. հ. ՊՆ/510-271 գրությամբ դիմել է գույքահարկի և հողի հարկի գծով արտոնություն տրամադրելու խնդրանքով:

«Հայաստանի ԴՕՍԱԱՖ» հասարակական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող, Ռուբինյանց 5 հասցեում գտնվող հանրակացարանային մասնաշենքը ՀՀ և ՌԴ միջպետական պայմանագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների շրջանակներում 1999 թվականից անհատույց օգտագործում է Հայաստանի Հանրապետությունում տեղակայված ՌԴ 102-րդ ռազմակայանը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ «Հայաստանի ԴՕՍԱԱՖ» հասարակական կազմակերպությունը փաստացի չի տնօրինում իրեն պատկանող գույքը, առաջարկվում է «Հայաստանի ԴՕՍԱԱՖ» հասարակական կազմակերպությանը տրամադրել 1.090.957 /մեկ միլիոն իննսուն հազար ինը հարյուր հիսունյոթ/ դրամ, որից գույքահարկ՝ 864.512 և հողի հարկ՝ 226.445 դրամի չափով արտոնություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՕՍԱԱՖ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի ԴՕՍԱԱՖ» հասարակական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող, Ռուբինյանց նրբանցք թիվ 5 հասցեում գտնվող շինության գույքահարկի և հողի հարկի գծով 2016 թվականի և ընթացիկ 2017 թվականի հաշվարկային գումարը կազմում է 1.090.957 /մեկ միլիոն իննսուն հազար ինը հարյուր հիսունյոթ/ դրամ, որից գույքահարկ՝ 864.512 և հողի հարկ՝ 226.445 դրամ, որի համար Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարը 28.02.2017թ. հ. ՊՆ/510-271 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետին՝ գույքահարկի և հողի հարկի գծով արտոնություն ստանալու խնդրանքով:

Ելնելով վերոգրյալից նպատակահարմար եմ գտնում §Հայաստանի ԴՕՍԱԱՖ¦ հասարակական կազմակերպությանը տրամադրել արտոնություն՝1.090.957 /մեկ միլիոն իննսուն հազար ինը հարյուր հիսունյոթ/ դրամ, որից գույքահարկ՝ 864.512 և հողի հարկ՝ 226.445 դրամ չափով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ Հ. 1

«ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Գույքահարկի և հողի հարկի գծով արտոնություն սահմանելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ Հ. 2

«ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Գույքահարկի և հողի հարկի գծով արտոնություն սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունմամբ Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ